ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» 03 2010թ.

N: 02.1/15/1085

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-16-26, ֆաքս (0312) 3-50-77

«Շիրակ կենտրոն» հկ-ի
նախագահ Վ. Թումասյանին

Ի պատասխան Շիրակի մարզպետին ուղղված Ձեր՝11.03.2011թ թիվ C9E7-806C-8961 դիմում-ուղերձի՝ հայտնում ենք, որ Դուք, ուսումնասիրություն կատարելիս, «մոռացել» եք պարզաբանում ստանալ մարզպետարանից, որի ոչ թե միջնորդությամբ, ինչպես գրում եք, այլ եզրակացությամբ են երեխաները տեղավորվում խնամքի հաստատություններ:

Շիրակի մարզպետարանը արձագանքել է ահազանգին... մարզպետին են դիմել նաեւ Ղարիբջանյան համայնքի ղեկավարը, մարզային ոստիկանության Ախուրյանի բաժնի պետը, Սեյրան Հարությունյանի հարեւանները: Կատարվել է ուսումնասիրություն եւ 6 ամիս կազմակերպվել են աջակցության միջոցառումներ մարզպետարանի եվ համայնքի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի կողմից: Երբ այդ միջոցները արդյունք չեն տվել, երեխաները, ովքեր ենթարկված էին բռնության ծանր տեսակներից մեկին, այն է՝ անտեսման /դպրոց չհաճախել, խոսքի բացակայություն, անմարդկային պայմաններ/, 2009թ սեպտեմբերի 29-ին 3-ը միասին տեղավորվել են Նանսենի անվան հաստատություն:

Երեխաներից մեկին միայն 1 տարի հետո՝ 2010թ սեպտեմբերի 1-ին է նախարարությունը վերաուղեգրել բարեգործական «Թոչունյան տուն» գիշերօթիկ խնամքի հաստատություն, քանի որ Նանսենի անվան մանկատունը վերակազմակերպվել էր գիշերօթիկ խնամքի հաստատության եւ պետք է կազմակերպեր դպրոցահասակ երեխաների խնամքը:

Մարզպետարանը չի չարաշահել եւ չի վերազանցել իր լիազորությունները: Բաժինն իրականացրել է կանոնադրությամբ հաստատված իր գործառույթը եւ խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի հետ, ավելին՝ նաեւ ոստիկանության հետ երեխաներին տեղավորել է հաստատություն, քանի որ նրանք հայտնվել էին կյանքին եւ առողջությանը վտանգ սպառնացող պայմաններում:

Ներկա պահին Սեյրան Հարությունյանի 3 երեխաները խնամվում եւ դաստիարակվում են բարեգործական «Թռչունյան տուն» գիշերօթիկ խնամքի հաստատությունում:

Ինչպես նախկինում, ներկայումս էլ կազմակերպվել է երեխաների մոր բուժզննումը եւ համապատասխան բուժումը:

/Կարդացեք նաեւ մյուս՝ ավելի մանրամասն եւ լուրջ հրապարակումները՝ «Հետք» N 9, «Հետք» N 10, Lragir. am, A. tv- «Կիսաբաց լուսամուտներ»/:

Հ. ԱՐՇԱԿՅԱՆ

Կատ. Լ. Գինոսյան
0312/51780/